տուածածնի պատկեր», «բեմի խաչկալի պատկեր», «մէկ մեծ պատկեր», «մէկ տախտակէ Աստուածածնի պատկեր», «մէկ փոքրիկ արծաթէ Աստուածածնի պատկեր» և այլն (շուրջ 12 հատ), որոնց մեջ հավանաբար եղել են նաև արժեքավոր գործեր և որոնց հետագա ճակատագրի մասին ևս ստույգ տեղեկություններ չունենք։

Ժամանակի կենցաղի և ազգագրության պատմության ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև նվիրվող առտնին օգտագործման կահկարասին, ամանեղենն ու այլ առարկաները։ Կան փոված-քի զանազան տեսակներ՝ «խալի», «խալիչայ», «կարպետ», «ջաջիմ», «թաքնամադ», տարբեր նյութի և որակի գործվածքներ. «չիթ», «պասմայ» կամ «ղալամքար» վարագույր, «զառքաշ» կամ «քաթան, պասմայ» ծածկոց, «զառ», «սուրմաքաշ» կամ այլ տեսակի «մահրամաներ», «զառ» կամ «ապրիշումէ եալ-լուխ», «մախմուռ», «քիմխա» կամ «թաւթայ» շապիկներ, «մետաքսյա» կամ ոսկեթել «մանդիլներ» և այլն։

Հետաքրքիր են նաև եկեղեցական ինվենտարի մասին տվյալները, որոնց մեջ զգալի թիվ են կազմում ծանրաքաշ արծաթե իրերն ու ոսկեքանվածք հանդերձները. «զառպապ շուրջառ», «զառ փեշկիր», «քանդաքար խաչկալ» և այլն։

Ազգագրական հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ամանեղենն ու խոհարարական առարկաները, ինչպիսիք են օրինակ կլայեկից կամ արծաթյա «իբրուղները», պղնձե «սիլիփչաները», մեծ մասամբ պղնձից կամ այլ մետաղներից պատրաստված ջրի, ճաշի և այլ սննդամթերքների և տնտեսական նշանակություն ունեցող ամանները. «գուկում», «բադիալ», «լական», «լանգարի», «ղազղան», «թանճարայ», «թափշի», «նալբաքի», «սաջաղի» և այլն։

Ձեռագրի սկզբի «յիշատակագրութեան» հեղինակը, ինչպես նաև հետագա նվիրատվությունների մասին գրառումներ կատարողները նշումներ են արել նաև համայնքի ընդհանուր նախաձեռնությամբ և հավաքական ջանքերով կատարված մեծ կամ փոքր կառուցումների, ծախսերի և նվիրատվությունների մասին։ Դրանք փաստեր են, որոնք այլ աղբյուրների զուգահեռ տվյալների հետ օգնում են ավելի որոշակի գաղափար կազմելու XVII դարի գյուղական համայնքի ներքին կազմակերպության, իրավունքների, հավաքական ուժի և նյութական հնարավորությունների մասին։ Մեծ մասամբ, ինչպես նույն դարաշրջանի այլ աղբյուրներում, Քյոթուկում ևս համայնքն անվանվում է «ժողովուրդ». «Աստուած ժողովուրդն օրհնէ, մէկ պասմայ Քաղուածոյ Շարական առին», կամ «Աստուած որհնէ ժողովրդեան, մեծամեծաց և փոքունց, մէկ լաւ անօթի համար ամբար շինիլ տվին»։ Սակայն հաճախ «էլ» և «ըռիաթ» բառերը ևս նույն իմաստով են գործածված. «Նոր եկեղեցին էլով շինէցին, թվին ՌՃՆ (1701)-ումն աւարտեցաւ։ ...[կէս] թումանէ մինչի Ճ (100) դիան ըռիաթն քոմակ արին, Աստուած մեր քանդխուդէքն, էլն, կանայքն, մեծ և փոքրն անփորձ և անսասան պահեսցէ» և այլն։

Քյոթուկում գրի առնված արձանագրությունների մեջ հայոց լեզվի պատմությամբ և բարբառագիտությամբ զբաղվողները ևս հետաքրքիր տվյալներ կարող են գտնել։ Այնտեղ զգալի նյութ կա նաև արական և իգական անձնանունների, տոհմանունների, ավել անունների կամ մականունների և ազգագրությանը հետաքրքրող տարբեր հարցերի վերաբերյալ։